ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆ

1 9 1 8 -1919 ԹԹ.

1-ԻՆ ՆԻՍՏ

1 օգոստոսի, հինգշաբթի, ժամը 11.30, 1918թ.

1918թ. օգոստոսի մեկին (նոր տոմարով)՝ հինգշաբթի օրը, Երևանում, բացվեց Հայաստանի Հանրապետության անդրանիկ գերագույն օրենսդրական ժողովի՝ Հայաստանի Խորհրդի առաջին նստաշրջանը:

Քաղաքն ուներ սովորական տեսք: Ոչ մի զարդարանք փողոցներում: Բացի մի քանի պաշտոնական շենքերից, ոչ մի դրոշակ: Խանութները բաց էին: Կառավարությունը ոչ մի միջոց ձեռք չէր առել և թողել էր, որ ազգաբնակությունն ինքը որոշի իր վերաբերմունքը, և ամեն ոք, ըստ սովորության, իր գործի հետևից էր: Միայն խորհրդի առաջ և շուրջը տիրում էր արտակարգ եռուզեռ: Ժողովուրդը խռնվել էր այգում և մայթերի վրա: Ձորքը՝ հետևակ, այրուձի, թնդանոթաձիգ ու գնդացիր, երաժշտությամբ ու դրոշակներով հավաքվում և բռնում է քաղաքային այգին շրջապատող փողոցները: Խորհրդի համար հատկացված էր քաղաքի կենտրոնական այգու դիմաց գտնվող՝ թեմական դպրոցին պատկանող շենքը, ուր տեղավորված էր քաղաքային ակումբը: Ակումբի թատերասրահը վերածված էր խորհրդի ընդհանուր ժողովասրահի, իսկ կողքի սենյակները՝ նախագահության, ֆրակցիաների, դիվանատան և այլն:

Բեմի վրա շինված էր նախագահության օթյակը՝ աջ կողմը ունենալով մի սեղան թարգմանների համար, ձախ կողմը՝ ճառախոսների համար ամբիոն:

Դահլիճի առաջին մասում՝ բեմին կից, շինված էին երկուական օթյակներ: Ձախ թևի առաջին օթյակը հատկացված էր կառավարության, երկրորդը՝ զորահրամանատարության: Աջ կողմի առաջին օթյակը կաթողիկոսի համար էր, իսկ երկրորդը՝ օտար պետության ներկայացուցիչների:

Դահլիճի միջին մասը վերապահված էր խորհրդի անդամներին: Հետևի մասը և վերնահարկը՝ հասարակության:

Խորհրդի մուտքի երկու կողմը կախված էին երկու դրոշներ ազգային գույներով՝ կարմիր, կապույտ և նարնջագույն:

Նշանակված ժամանակին արդեն բոլոր տեղերը գրավված էին: Դահլիճի մեջտեղը շարված էին խորհրդի անդամները՝ հետևյալ կարգով՝ հաշվելով աջից ձախ: Աջ կողմը Հայ ժողովրդական կուսակցության ֆրակցիա - *Ստ. Մալխասյան, Արշալույս Մխիթարյան, Գր. Տեր-Խաչատրյան, Հովհ. Մելիքյան, Գարեգ. Ենգիբարյան, Սիր. Տեր-Մարտիրոսյան:*

Անկուսակցական - *Ստ. Մամիկոնյան, Պետ[րոս] Ջաքարյան:*

Մահմեդական պատգամավորներ - *Մեհդ-Ռեզա Միր-Բաբաև, Միրզա Ջաբար Մամեդով, Աբբեր աղա Իսմայիլով, Միր Բաշիր Միր-Բաբաև, Մամեդ-բեգ Մահմեդբեգով, Ասադ բեկ Աղաբաբեկով:*

Ռուս պատգամավոր - *Իվան Իվանովիչ Ջորին:*

Եզդի պատգամավոր - *Յուսուֆ բեկ Թեյմուրով:*

Կենտրոն. Հ. Հ. Դաշնակցության Ֆրակցիա - *Ավ. Սահակյան, Սիր. Տիգրանյան, Սմբ. Խաչատրյան, Սահ. Թորոսյան, բժ. Արտ. Բաբալյան, Եփր. Սարգսյան, Ռ. Տեր-Մինասյան, բժ. Հովհ. Տեր-Միքայելյան, բժ. Արշ. Ղազարյան, Դրո [Դրաստամատ Կանայան], Հով. Բուդաղյան, Տիգ. Ռաշմաճյան, Թադ.. Տոշյան, Հակ. Տեր-Հակոբյան, Հ. Սարգսյան, Արտ. Վանցյան, Արշալույս Աստվածատրյան:*

Ձախ կողմը. Սոցիալիստ-հեղափոխական - *բժ. Գր. Տեր-Հակոբյան, Դավ. Զուբյան, Արշամ Խոնդկարյան, Գ.Տեր-Օհանյան, Տիգ. Մուշեղյան, Արմ. Ավետիքյան:*

Սոցիալ-դեմոկրատ - *Արշավիր Մելիքյան (բոլշևիկ), Հայկ Ազատյան, Թադ. Ավդալբեկյան, Մ. Ղարաբեգյան, Ա. Մելիք Աղաջանյան, Հովհ. Ջաքարյան:*

Կառավարական օթյակում նստած էր վարչապետ *Հ. Քաջազնունին* իր դահլիճի մյուս անդամների հետ միասին՝ ներքին գործոց նախարար *Արամ Մանուկյան*, զինվորական նախարար զոր. *Հովհ. Հախվերդյան*, ելևմտական նախարար *Խաչատուր Կարճիկյան*, արդարադատության նախարար *Գրիգոր Պետրոսյան:* Դիվանագիտական օթյակում նստած էին գերման[ական], ավստրիական և օսմանյան ներկայացուցիչները, պարսից հյուպատոսը, ռուս, թուրք և ուկրաինական ազգային խորհուրդների ներկայացուցիչները: Զինվորական օթյակում կային Հայաստանի Հանրապետության առաջին սպարապետ, զոր. *Թովմաս Նազարբեգյանը*, զոր. *Միլիկյանը*, *Դրոն* և ուրիշ զինվորականներ: Պարապ էր միայն կաթողիկոսի օթյակը:

Մամուլի ներկայացուցիչներին հատկացված էր առանձին տեղ:

Հասարակության համար վերապահված տեղերը՝ դահլիճի հետևի մասը և վերնահարկը, գրավված էին հյուրերով և ունկնդիր հասարակությամբ: Պարապ տեղ չկար:

Ամբողջ սրահը կրում էր խորհրդավոր բնույթ. պատգամավորները և հասարակությունը ամենքը լուռ էին ու մտահոգ:

Ժամը 11 և կեսին ամբիոն բարձրացավ Հայոց Ազգային խորհրդի նախագահ Ավետիք Սահակյանը և հանուն Ազգային խորհրդի բաց արավ Հայաստանի Խորհրդի անդրանիկ նիստը՝ հետևյալ ճառով.

«Քաղաքացիներ, պատգամավորներ Հայաստանի Խորհրդի:

Գերագույն Հայոց Ազգային խորհրդի կողմից ես պատիվ ունեմ այսօր բաց անել անդրանիկ նիստը Հայաստանի Խորհրդի և հայտարարել, որ այսուհետև սա է միակ լիազոր մարմինը՝ անփոփոխ իր մեջ Հայաստանի Հանրապետության պետական իշխանությունը:

Այս օրը կդառնա մեզ համար պատմական և կբանա մի նոր, լուսավոր դարաշրջան մեր երիտասարդ պետության կյանքում՝ ինքնուրույն քաղաքական և տնտեսական զարգացման:

Այս օրը կմնա միշտ հիշատակելի և այն պատճառով, որ առաջին անգամ իրականացած ենք տեսնում մեր նեղ հորիզոնի սահմաններում գեղեցիկ երազներն ու նվիրական տենչը ինքնորոշման, թեև անհնարին դժվարին պայմաններում:

Ենթադրելով, որ մեր երկրի անկախության հարցին շատերը ձեզանից լավատեղյակ չեն, ես հույժ կարևոր եմ գտնում այս բարձր ժողովին ներկայացնել այն փուլերը, որոնցով անցել է սկզբից մինչև վերջին ձևակերպումը՝ անկախ պետությունների գաղափարը Անդրկովկասում:

Մեր Հանրապետությունը, ինչպես և մյուսները, հանդես եկավ իբրև անկախ պետություն այն օրից, երբ Անդրկովկասյան Սեյմը մայիսի 26-ին իրեն հայտարարեց կազմալուծված. վրաց սոցիալ-դեմոկրատ ֆրակցիայի նախաձեռնությամբ և առաջարկությամբ, նույն օրն իսկ, Վրաստանը հայտարարեց իրեն անկախ:

Անդրկովկասի ամբողջության փլվելուց հետո մեր երկիրը թողնված էր իր բախտին, ուստի Հայոց Ազգային խորհուրդը շտապեց իր վրա վերցնել կառավարության բոլոր ֆունկցիաները:

Հենց այդ ժամանակն էր, որ ստացվեց օսմանյան կառավարության բոլորին հայտնի վերջնագիրը նոր հողային գրավումների մասին և պահանջվում էր պատասխան 48 ժամվա ընթացքում: Գերագույն խորհրդի կողմից անմիջապես առանձին պատվիրակություն ուղարկվեց Բաքում՝ հանձինս Հ. Քաջազնունու, Մ. Պապաջանյանի և Ա. Խատիսյանի, տալով նրանց արտակարգ լիազորություններ՝ բանակցություններ վարելու տաճիկ պատվիրակության հետ:

Մեր պատվիրակությունը հաջողեցրեց որոշ ուղղումներ մտցնել սահմանների մեջ, բայց և այնպես ստիպված էր ընդունել վերջնագիրը և խաղաղության դաշինք կնքել Վեհիբ փաշայի և Խալիլ բեյի հետ: Այստեղ առաջին անգամ Հայոց Ազգային խորհրդի պատգամավորները պաշտոնապես ճանաչվեցին իբրև ներկայացուցիչներ անկախ Հայաստանի և ստորագրեցին հունիսի 4-ի դաշինքը:

Մեր պետության անկախության մասին հայտնի է նույնպես Տաճկաստանի դաշնակից պետություններին՝ Գերմանիային, Ավստրիային և Բուլղարիային: Պոլսում է մեր երկրորդ պատվիրակությունը, որի մեջ մտնում են Ա. Ահարոնյանը, Ա. Խատիսյանը և Մ. Պապաջանյանը, որոնք ուղևորվել են այնտեղ Օսմանյան կառավարության հրավերով՝ բանակցություններ վարելու Տաճկաստանի և նրա դաշնակից պետությունների հետ:

Այսպիսով, բազմակողմանի քննելով մի կողմից երկրի ուժերը և այն հանգամանքները, որոնց մեջ գտնվում է հայ ժողովուրդը, և, մյուս կողմից, քաղաքական և տնտեսական ստեղծված դրությունը, Հայոց Ազգային խորհուրդը սեղմեց իր սիրտը և անողոք գիտակցությամբ որոշեց վերջնականապես ընդունել վերջնագիրը և ճանաչել Հայաստանի անկախությունը՝ իրեն հանձնելով պատմության անաչառ դատաստանին:

Այո՛, մեր հանրապետությունը փոքր է և նեղ իր սահմաններով, նա զրկվել է իր ամենագնահատելի երկրամասերից ու չի կարող իր մեջ տեղավորել ամբողջ ազգաբնակությունը և, կարծես թե, պայմաններ չունի անկախ գոյության համար: Բայց ես կարծում եմ, որ երկրի սահմանները քարացած չեն կարող մնալ միշտ. ես հավատում եմ, որ մեր երկրի սահմանները կընդարձակվեն կյանքի երկաթե ուժով, մեր արդար և անվիճելի իրավունքների պաշտպանությամբ գրավված հողերի վերաբերմամբ և նոր բարեկամական դաշինքով Տաճկաստանի և նրա դաշնակից պետությունների հետ, որոնց ներկայացուցիչները ներկա են այստեղ: Մենք ընտրել ենք համաձայնության և խաղաղության ուղին, և ուզում եմ հուսալ, որ չենք սխալվում:

Մինչ այդ, մենք կկատարենք սրբությամբ և անշեղ կերպով մեր այն պարտականությունները, որոնք բխում են խաղաղության դաշինքից: Թողնե՛նք ապագա հեռանկարները, համենայն դեպս, այսօր, այստեղ, առանց տատանումների և լիակատար վճռականությամբ մենք գցում ենք խարիսխը մեր պետական նավի և դնում ենք հիմքը պետական շենքի՝ ձգտելով միշտ կատարելագործել նրան ի բարօրություն Հայաստանի Հանրապետության բոլոր ազգությունների, իբրև զավակներ մեկ հարազատ մայր հայրենիքի (բուռն ծափահարություններ):

Ինչ վերաբերում է կառավարությանը, նա վերջնականապես կազմվեց այստեղ Մինիստր-նախագահ Հ. Քաջազնունու կողմից Գերագույն խորհրդի հանձնարարությամբ, և ինչպես հայտարարված էր, նա արդեն դիմել է իր պետական գործունեության: Կազմակերպված է վերջնականապես և Հայաստանի Խորհուրդը, իբրև երկրի օրենսդիր բարձր մարմին. համաձայն որոշման խառն նիստի Գերագույն Ազգային խորհրդի, նա կազմվել է Գերագույն խորհրդի 12 անդամներից եռապատկված թվով՝ ավելացնելով դրան երկու չեզոքներ: Ֆրակցիաները ներկայացված են Հայաստանի խորհրդում՝ նույն պրոպորցիայով, ինչպես և Գերագույն խորհրդում: Ընդամենը հայ պատգամավորների թիվը 38 է: Բացի հայ պատգամավորներից, Գերագույն խորհուրդը պարտավոր համարեց իրեն իսկույն նեթ մտցնել Հայաստանի Խորհրդի կազմի մեջ և ներկայացուցիչներ այն ազգությունների, որոնք փոքրամասնություն են, ինչպիսիք են՝ մուսուլմաններ - 6 պատգ., ռուսներ - 1 և եզդիներ -1: Այսպիսով, Հայաստանի Խորհրդի կազմի մեջ մտնում են ընդամենը 46 պատգամավոր, որոնց ցանկն իսկույն կհայտարարեմ: Չեմ կարող չդիմել օտարազգի պատգամավորներին և հայտնել նրանց, որ փոքրամասնության իրավունքները մենք առանձնապես գնահատում ենք ու պաշտպանում և այդ իսկ պատճառով մեր սրբազան պարտքը համարեցինք հենց Հայաստանի Խորհրդի Ա. նիստից ապահովել ձեր մասնակցությունը:

Ես ի բոլոր սրտե ողջունում եմ ձեզ և անչափ ուրախ եմ, որ դուք լծվել եք մեզ հետ ընդհանուր հայրենիքի անդաստանը մշակելու և երկրի շինարար գործը առաջ տանելու:

Հանձնելով ձեզ երկրի բախտը ես ոգևորված եմ նույնպես և այն մտքով, որ դուք մեր մատաղ հանրապետության մեջ կմարմնացնեք քաղաքական ազատությունները և սոցիալական արդար պահանջները աշխատավոր մասսաների, որովհետև մենք կռվել ենք, նահատակվել ենք հանուն այդ մեծ գաղափարների ու

նրանց իրականացման մեջ ենք տեսնում կյանքի գեղեցկությունը և նրա բարձր նպատակը:

Սպառված համարելով իմ պարտականությունները իբրև նախագահ Գերագույն խորհրդի և հաջողություն ցանկանալով ձեզ ձեր պատասխանատու պետական գործունեության մեջ, առաջարկում եմ ընտրել նախագահ Հայաստանի Խորհրդի:

Հայտարարում եմ Հայաստանի Խորհրդի նիստը բացված»:

Ավ. Սահակյանի բացման ճառից հետո, ժամը 12-ին, ժողովրդական «Կեցցե»ների և «Մեր հայրենիք»-ի նվագով, խորհրդի շենքի գլխին բարձրացվեց հայկական եռագույն դրոշը:

Ավ. Սահակյանի ճառը թարգմանվեց թուրքերեն և ռուսերեն լեզուներով: Ապա *Ավ. Սահակյանը* կարդաց Հայաստանի Խորհրդի անդամների ցանկը, որից հետո առաջարկեց ընտրել խորհրդի նախագահ: ՀՅ դաշնակցության ֆրակցիայի կողմից *Սմբատ Խաչատրյանը* առաջարկեց նախագահ ընտրել Ավ. Սահակյանին: Մյուս ֆրակցիաները թեկնածու չներկայացրեցին: Բաց քվեարկությամբ Հայաստանի Խորհրդի նախագահ ընտրվեց Ավետիք Սահակյանը. ձեռնպահ մնացին 6 սոցիալ-դեմոկրատ պատգամավորները:

Շնորհակալություն հայտնելով Խորհրդին՝ նախագահը առաջարկեց ընտրել երկու փոխնախագահներ:

Արշալույս Մխիթարյանը Հայ ժողովրդական կուսակցության կողմից դրեց իրենց ֆրակցիայի անդամ Գրիգոր Տեր-Խաչատրյանի թեկնածությունը: Սոցիալիստ-հեղափոխական ֆրակցիան առաջարկեց ընտրել Դավիթ Զուբյանին: Բաց քվեարկությամբ ընտրվեցին *Գր. Տեր-Խաչատրյանը*՝ 4 սոցիալ-դեմոկրատների ձեռնպահությամբ և *Դ. Զուբյանը*՝ միաձայնությամբ:

ՀՅ դաշնակցության ֆրակցիայի կողմից առաջարկվեց ընտրել անկուսակցական *Պետրոս Ջաքարյանին* ավագ քարտուղար. ընտրվեց միաձայնությամբ:

Դիվանի կազմությունից հետո նախագահ *Ավ. Սահակյանը* դիմեց խորհրդին՝ որոշելու, թե օրակարգը պետք է սպառված համարե՞լ, թե շարունակել աշխատանքները: *Սմբ. Խաչատրյանը* ՀՅ դաշնակցության ֆրակցիայի կողմից առաջարկեց սահմանափակվել արդեն եղածով և մնացած խնդիրները հետաձգել հաջորդ նիստին: Սոցիալ-դեմոկրատների կողմից առաջարկվեց երկրորդ նիստը նշանակել հետևյալ օրը. դաշնակցականները պնդեցին նշանակել շաբաթ օրը: Ժողովրդականների կողմից *Գ. Տեր-Խաչատրյանն* առաջարկեց հաջորդ նիստում լսել կառավարության զեկուցումը: Վարչապետ Քաջազնունին հայտնեց, թե կառավարությունը չի ենթադրում վաղը հայտարարություն անել: Քվեարկության դրվելով երկու առաջարկը՝ ձայների մեծամասնությամբ որոշվեց հաջորդ նիստը գումարել շաբաթ օրը, օգոստոսի 3-ին, ժամը 11-ին:

Նիստը հայտարարվեց փակված:

Հայաստանի Խորհրդի անդրանիկ նիստի փակումից հետո, խորհրդի շենքի առջև, տեղի ունեցավ զորահանդես, որն ընդունեց վարչապետ Քաջազնունին: Հանդեսը վարում էր երրորդ բրիգադի պետ գնդապետ Դանիել բեկ Փիրումյանը: Վարչապետը, խորհրդի նախագահի հետ միասին՝ շրջապատված խորհրդի անդամներով, նախարարներով, գերման, ավստրիական և օսմանյան զինվորական ներկայացուցիչներով, հայ բանակի զինվորական ներկայացուցիչներով, հայ բանակի զինվորական պետերով ու հյուրերով աջից ձախ անցավ զորաջոկատը՝ առանձին-առանձին ողջունելով զորամասերը, ապա տեղի ունեցավ զորքի հանդիսավոր տողանցք: Հանդեսից հետո զորքը երաժշտությամբ ու երգերով անցավ քաղաքի գլխավոր փողոցներից:

«Զանգ», 4 օգոստոսի 1918թ.: «Հորիզոն», 9 օգոստոսի, 1918թ.